ՉՎԱՐԱՆԱՅԻՆ ՔԱՂՁԿԵՂ...

Կոչւած նաեւ Ձվարանների Քաղձկեղ

Ի՞նչ Բան Փնտռելու Եմ

Ձվարանների Քաղձկեղը շատ դժվար է գտնել: Կարող է որ ոչ մի նշան կամ ախտանիշ չհայտնվէ մինչեւ քաղձկեղի տարածումը: Ձեր մարմնի վրայ բաներ որոնք դուք զգում կամ տեսնում եք կարող են ձեվանալ իբր քաղձկեղի անկապակից: Այդ նշանները ընդհանրապէս քաղձկեղից չեն պատճառված, սակայն դուք հարկավոր եք բժիշկի տեղեկացնել հէտեվեալ նշանները անմիչապէս.-

- Փքված կամ ուռած ստամոքս արտակարգ հեղուկների հետեվանքով: Այս ուռեծքը տարբեր է դրանից որ դուք զգում եք ձեր դաշտանի շրջանում:
- Մարմնի կշիռի հավելում կամ կորուստ առանց որեւէ պատճառի:
- Ստամոքսի շրջանի ծավալի լայնացում:
- Արիւնահոսութիւն կամ տարբեր հոսումներ իգական գործարաններից, դաշտանի շրջանից դուրս:
- Ստամոքսի խնդիրներ որոնք չեն հեռանում: Դուք կարող եք զգալ ցաւ, գազ, կամ սրտխառնուք:
- Կոնակի կամ սրունքի ցաւեր:

Ի՞նչ Բան Ռիսկս Ավելացրում է

Ռիսկերը որոնք ավելացրում են հավանականութիւնը ձվարանի քաղձկեղի վարակումի ներառում են.-

- Հիսունից ավելի տարիք
- Առաջին դաշտանի պատահումը վաղաժամ, նախքան տասներկու տարեկան:
- Երբէք հղի չեղած կամ ծնունդ չտւած
- Առաչին ծնունդը պատահած երեսուն տարեկանից հետո
- Սիգարեթ ծխելը
- Հղանալու անկարողութիւն
- Ներկայի կամ անցեալի կրծքի քաղձկեղ

Ինչ Բան Որ Կանայք Իմանալու Պէտքութիւն Ունեն

- Ընտանիքի անդամ որ տառապել է կրծքի, հաստ աղիքի, կամ ձվարանի քաղձկեղէ
- Չափազանց գերութիւն
- Երկար ժամանակով թերափեայի որը փոխարինում է էստրոջեն կոչված հորմոնը մարմնի մէջ, ճանցված նաեւ իբր էստրոջենի փոխարինման թերափեա կամ հորմոնի փոխարինման թերափեա:

Ի՞նչպէս Կարող Եմ Գտնել Ձվարանի Քաղձկեղը Վաղաժամ

- Սեռային հարաբերութիւններ ունեցող կամ տասնութ տարեկանից ավելի կանայք որովայնի խոռոչի (փէլվիսի) ստուգման համար քննվելու են ամեն տարի.
- Փէլվիսի քննութեան ընթացքին, բժիշկը կը շոշափէ իգական գործարանները, ստուգելով նրանց չափը եւ ձեւը,սակայն հաճախ ձվարային քաղձկեղը դժվար է ճանաչել վաղաժամ: Պատճառը այն է որ ձվարանները խոր թաղված են մարմնի մէջ եւ բժիշկը չի կարող դրանք հեշտութեամբ շոշափել: Փափ ստուքումը կարող է վաղաժամ ճանաչել վերարտադրութեան պարանոցի (սէրվիքսի) քաղձկեղը: Դա կարող չէ օգնել ձվարանների քաղձկեղի հայտնաբերումը վաղաժամ:
- Կան ուրիշ տարբեր ստուգումներ որոնք կարող են հայտնաբերել ձվարանների քաղձկեղի ներկայութիւնը, սակայն դրանք կարող են չգնել վաղաժամ: Դուք ձեր բժիշկի հետ կը վիճարկեք ձեզի համար լավագոյն փորձի մասին: Դա կախում ունի ձեր տարիքից եւ բժշկական անցեալից: Կախում ունի նաեւ անսովոր բաների զոր դուք նշմարած եք ձեր մարմնի վրա: Այդ փորձերը ներառում են զանազան արեան ստուգումներ եւ առանց ցավի մի քննութիւն որը կոչւում է «ուլտրասաունդ»:

Շարունակութիւնը ետեվի կողմը



Ի՞նչպէս Դարմանելու Է Ձվանների Քաղձկեղը

Կան զանազան միջոցներ որոնցմով բժիշկները կարող են խնամել ձվանների քաղձկեղը:

- Վիրաբուժումը օգտագործւում է հանելու համար մի կամ զոյգ ձվարանները: Միայն այդ վարակած ձվարանն է որ հարկ է հանել երբ քաղձկեղի վարակւում գտնւում է: Սա օգտակար է երիտասարդ կանաց համար որոնք փափաք ունեն երեխա ծնելու:
- Վիրաբուժումից հետո քիմօթերափեա օգտագործւում է մնացած որեւէ քաղձկեղի բուժման համար:
- Միացեալ Նահանգներում՝ ճառագայթի թերափեա շատ չէ օգտագործվում քաղձկեղի խնամքի համար:

Սեռային հարաբերութիւն ունեցող կամ տասնութ տարեկանից աւելի ամէն կին որովայնի խոռոչի (փելվիսի) քննութիւն ստանալու է:

Ի՞նչ Են Իմ Ապրելու Հնարավորութիւնները Անց Ձվարանների Քաղձկեղի Վարակումից

- Կանաց մեծամասնութիւնը, ինիսուն առ հարիւր տոկոսով կ՛ապրեն հինգ կամ աւելի երկար տարիներ եթէ ձվարանների քաղձկեղը գտնվէ վաղաժամ:
- Կանայք ավելի շատ մեռնում են ձվարանների քաղձկեղի պատճառավ քան ուրիշ որևէ կնոչական վերարտադրութեան քաղձկեղից:

Ասացե՛ք ձեր բժիշկին եթէ որևէ ախտանիշ ունեք: Խօսեցե՛ք ձեր բժիշկի հետ եթէ որևէ հարցում ունեք ձեր առողջութեան կամ դարմանումի մասին: Ձեր բժիշկը կարող է ձեզի տալ աւելի շատ տեղեկութիւն ձվարանների քաղձկեղի մասին:

Աղբիւր.- California Cancer Registry (CDHS/CSS)
American Cancer Society Facts and Figures 2004.

Այս իրողութեան թերթիկը կարող է արտադրւել Քալիֆօրնիոյ Հանրային Առողջապահական Բաժանմունքի Կնոց Առողջապահական համակարգիչի ցանցից:
www.dhs.ca.gov/director/owh.

Arnold Schwarzenegger, Governor
State of California

S. Kimberly Belshé, Secretary
Health and Human Services Agency

Sandra Shewry, Director
Department of Health Services

Revised 11/04